

Մաթեմատիկա – դպրոցական փուլ  
5-րդ դասարան /տևությունը 150 րոպե/


1.



$$\text{Banana} + \text{Apple} = 5$$



$$\text{Apple} + \text{Pear} = 6$$



$$\text{Pear} + \text{Banana} = 3$$



$$\text{Banana} + \text{Apple} + \text{Pear} = ?$$

1) 14 2) 8 3) 7 4) 11

2. Նապաստակը մեկ օրվա ընթացքում պարտադիր ուտում է կամ 5 հատ գազար, կամ 2 գլուխ կաղամբ: Մեկ շաբաթվա ընթացքում նա կերավ 15 գազար: Քանի՞ գլուխ կաղամբ է կերել նապաստակը այդ շաբաթվա ընթացքում:

1) 2 2) 4 3) 6 4) 8

3. 25-ամ երկարություն ունեցող ժապավենը քանի՞ մմ-ով է երկար 1դմ 9սմ երկարությամբ ժապավենից:

1) 6 2) 16 3) 60 4) 70

4. A թվից դեպի ձախ գրված է 18 թիվ, իսկ դեպի աջ՝ 8 թիվ: Քանի՞ թիվ է գտնվում A թվի և մեջտեղում գրված թվի միջև:

1) 4 2) 5 3) 7 4) 3

5. Գտնել ուղղանկյան պարագծի երկարությունը, եթե նրա երկու մեծ կողմերի և մեկ փոքր կողմի գումարը հավասար է 25-ի, իսկ երկու փոքր և մեկ մեծ կողմերի գումարը՝ 23-ի:

1) 30 2) 28 3) 34 4) 32

6. Գրատախտակին նվազման կարգով իրար հետևից գրված են 2019-ից մինչև A բնական թվերը: 201920182017.....: Ո՞րն է A բնական թիվը, եթե օգտագործվել է 2020 թվանշան:

1) 505 2) 1516 3) 1515 4) 1516


7. 1900-ից մինչև 2020 թվերի միջև քանի՞ բնական թիվ կա, որոնք գրվում են չորս տարբեր թվանշաններով:

1) 63 2) 56 3) 49 4) 55

8. 100 հատ բնական թվերի գումարը հավասար է 102-ի: Գտնել այդպիսի 100 թվերի արտադրյալի հնարավոր աենամեծ արժեքը:

1) 0 2) 1 3) 3 4) 4

9. Մարմինը կազմված է իրար կպած 7 խորանարդներից: Եթե ամբողջ մարմինը ներկենք, ապա խորանարդների քանի՞ նիստ ներկված չի լինի:



1) 7 2) 11 3) 12 4) 14

10. Մի քանի բնական թվեր գրված են իրար կողքի: Հայտնի է, որ ցանկացած երեք իրար հաջորդող թվերի գումարը գույգ թիվ է, իսկ ցանկացած չորս իրար հաջորդող թվերի գումարը կենտ: Այդ պայմաններին բավարարող ամենաշատը քանի թիվ է հնարավոր գրել:

- 1) 8 2) 4 3) 5 4) 6

11. Սառույցի կտորը յուրաքանչյուր 25 րոպեում կորցնում է իր քաշի կեսը: 1ժ 15ր հետո սառույցը կշռում էր 125 գրամ: Քանի՞ կգ էր կշռում սառույցի կտորը սկզբում:

- 1) 1/2 2) 2 3) 1 4) 3/4

12. Մոզական աղյուսակի /սյուների, տողերի և երկու անկյունագծերի վրա գտնվող թվերի գումարները իրար հավասար են/ գրված են 9 թվեր: Արմենը մաքրել է այդ թվերից հինգը: Ինչի՞ է հավասար Արենի մաքրած թվերի գումարը:

6		8
	9	4

- 1) 20 2) 18 3) 13 4) 16


13. Անին ուղղի վրա նշեց մի քանի կետ: Այնուհետև Լիլիթն Անիի նշած յուրաքանչյուր երկու հարևան կետերի միջև նշեց մեկ կետ: Հետո Անուշը յուրաքանչյուր երկու հարևան կետերի միջև նշեց մեկ կետ: Ուղղի վրա ստացվեց նշված 33 կետ: Քանի՞ կետ նշեց Անուշը:

- 1) 17 2) 11 3) 15 4) 16

14.  $9սմ^2$ ,  $16սմ^2$  և  $25սմ^2$  մակերեսներ ունեցող

քառակուսիները դրել են կողք կողքի: Քանի՞ սանտիմետր է ստացված պատկերի պարագիծը:

- 1) 32 2) 34 3) 46 4) 48




15. Տրված 6 կետերից 4-ը՝ A, B, C և D-ն գտնվում են մի ուղղի վրա:

Քանի՞ եռանկյուն գոյություն ունի որոնց գագաթները հանդիսանում են այս 6 կետերից 3-ը:

- A                      • B                      • C                      • D
- E                        • F

16. Ուղղանկյունը կազմված է 9 քառակուսիներից, որոնցից երկուսն ունեն 1սմ երկարությամբ կողմ: Քանի՞ սմ է ուղղանկյան պարագիծը:



17. Ամենաշատը քանի՞ իրարից տարբեր բնական թվեր կարելի է գրել օգտագործելով ճիշտ 2019 թվանշան:

18. Ավտոմեքենան շարժվում էր 90կմ/ժ արագությամբ, իսկ ավտոբուսը՝ 20մ/վ արագությամբ: Քանի՞ կմ է ավել անցել ավտոմեքենան ավտոբուսից շարժումը սկսելուց 20 րոպե հետո:

19. Գագիկն ունի հավասար թվով քույրեր և եղբայրներ: Նրա քույր Անիի քույրերի քանակը երեք անգամ պակաս է եղբայրների քանակից: Քանի՞ երեխա կա այդ ընտանիքում:

20. ABCD ուղղանկյունը կազմված է հինգ միանման ուղղանկյուններից: Քանի՞ մմ է ABCD ուղղանկյան պարագիծը, եթե  $BC = 33$ մմ:

